

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2018թ. հոկտեմբերի 4-ի նիստի

(արձ. N2)

1. Հանձնարարել ամբիոնների վարիչներին եռօրյա ժամկետում ներկայացնել ամբիոնի կողմից առաջադրված թեկնածուներ ԵԹԿՊԻ-ի խորհրդի կազմում ընդգրկելու համար,
 - 1.1 ներկայացված թեկնածուների ընտրությունը սահմանված կարգով կազմակերպելու նպատակով գիտական խորհրդի նիստը գումարել ա.թ. հոկտեմբերի 9-ին:
2. Հաստատել և ա.թ. հոկտեմբերի 1-ից ուժի մեջ համարել «ԵԹԿՊԻ-ի նախապատրաստական դասընթացներում տարվող ուսումնական աշխատանքի հաշվարկի նորմեր»-ը:
3. Աջակցել արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյանի «Դրամայի խաղային նախահիմքերը» գրքի հրատարակմանը՝ հատկացնելով հրատարակչական ծախսերի 50%-ը:
4. Ինստիտուտի բուֆետը մրցութային կարգով վարձակալության տալու և ՀՀ ԿԳՆ-ից ստացված համապատասխան հանձնարարականի վերաբերյալ պրոռեկտոր Վ. Եղիազարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:
5. Ինստիտուտի գլխավոր ինժեներ Գագիկ Մնացականյանին ա.թ. հոկտեմբերի 8-ին գործուղել Վանաձորի մասնաճյուղ՝ պարզելու մասնաճյուղին հատկացված տարածքի հետ կապված կադաստրային խնդիրները և տալ եզրակացություն գործողությունների հետագա ընթացքի վերաբերյալ:
6. Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման հավաստագրման հանձնաժողովում ընդգրկվելու համար թեկնածուներ առաջադրելու վերաբերյալ ՀՀ ԿԳՆ գրությունն ընդունել ի գիտություն,
 - 6.1 հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին այդ մասին տեղեկացնել դասախոսական կազմին, թեկնածուների առաջադրումը կատարել կամավոր հիմունքներով:

7. Ի փոփոխումն ԳԽ 2018թ. փետրվարի 23-ի նիստի որոշման ԵԹԿՊԻ-ի մանդատային հանձնաժողովի կազմում կատարել հետևյալ փոփոխությունը՝

7.1 Անձնակազմի կառավարման, միջազգային համագործակցության և միջբուհական աշխատանքների գծով նախկին պրոռեկտոր Հովհաննես Ավագյանին հանել Մանդատային հանձնաժողովի համակազմից,

7.2 Մանդատային հանձնաժողովի կազմում ընդգրկել՝

7.2.1 Անձնակազմի կառավարման, միջազգային համագործակցության և միջբուհական աշխատանքների գծով նորանշանակ պրոռեկտոր Արմինե Եղիազարյանին,

7.2.2 Հեռակա ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար Նարինե Բերոյանին:

8. Գիտական խորհրդի և Ռեկտորատի կազմում կատարել հետևյալ փոփոխությունը՝

8.1 աշխատանքից ազատվելու կապակցությամբ Գիտական խորհրդի և Ռեկտորատի համակազմերից հանել Հովհաննես Ավագյանին,

8.2 Ռեկտորատի կազմում ընդգրկել Հեռակա ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար Նարինե Բերոյանին:

Գիտքարտուղար

Գ.Հովհաննիսյան